# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ
համայնք, ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Հեռ. (0231)60136 ,
gay.armavin@mta.gov.am


N 156
*18 նոյեմբեր 2016թ.*

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՇՈՏ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Գայ համայնքի ղեկավարի 2016 թվականի հոկտմբեր ամսվա ընթացքում ընդունած որոշումներն ու արձակած կարգադրությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.Մարկոսյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2016 թվականի N 28

### ԱՆՆԱ ԹԱՂԵՎՈՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կողմից 2016 թվականի հոկտեմբերի 21-ին ուղարկված թիվ 02/07.1/40582-16 գրությունը՝համայնքային ծառայողների վերապատրաստման դասընթացներին մասնակցելու նպատակով.

Կարգադրում եմ .

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնքի աշխատակազմի քարտուղար Աննա Թադևոսյանին սույն թվականի հոկտեմբերի 24-ից մինչև հոյեմբերի 3-ը գործուղել Արմավիրի մարզպետարան ՝համայնքային ծառայողների դասընթաց-ներին մասնակցելու նպատակով:

2.Աշխատակազմի քարտուղարի բացակայության ժամանակ պարտականությունների կատարումը վերապահել Գայի համայնքապետարանի առաջատար մասնագետ Ժենիկ Բոյաջյանին:

3.Առաջատար մասնագետին՝սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:

4.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ՄԱՐԿՈՍՅԱՆ

2016թ. նոյեմբերի 15
գ.Գայ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 53

## ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 16-րդ կետով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Մելանյա Համբարյանի 2016 թվականի հոկտեմբերի 10-ի դիմումը.

Որոշում եմ`

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացի Մելանյա Համբարյանին սեփականության իրավունքով պատկանող 0,237 հա հողատարածքին (ԿԾ 0225-0023) տալ հասցե` Երևանյան փողոց թիվ 34/1:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ՍԵՅՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

20 16թ. նոյեմբերի 15
գ.Գայ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 54

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով.

Որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողներ՝ աշխատակազմի քարտուղար Աննա Թադևոսյանի (1.2-1) և աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ Արփիկ Ինջիղուլյանի (3.2-1) ատեստավորումն անցկացնել 2016 թվականի նոյեմբերի 23-ին, ժամը 14:00-ին:

2. Ատեստավորման նախապատրաստման աշխատանքերն իրականացնել <<Համայնքային ծառայության մասին> Հայաստանի հանրապետության նօրենքով նախատեսված կարգով և ժամկետով:

3. Ատեստավորման տեխնիկական սպասարկումն իրականացնելու նպատակով լիազորված անձ նշանակել Արմավիրի մարզի Գայի համայնքապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ Տաթևիկ Հարությունյանին:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

2016թ. նոյեմբերի 15
գ.Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 52

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին > Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով, <<Համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով և հիմք ընդունելով Վաղինակ Ներսիսյանի 2016 թվականի հոկտեմբերի 3-ի դիմումը.

Որոշում եմ՝

1. Վերականգնել Արմավիրի մարզի Գայ համայնքի Աբովյան փողոց, թիվ 16 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացիներ Վաղինակ Շավարշի Ներսիսյանի (ծնված 30.06.1938թ) և Էմմա Քերոփի Գրիգորյանի (ծնված 02.06.1940թ) գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը փաստացի օգտագործվող 0,217 հա օրինական հողամասի (0,187 հա օրինական հողամասին կից ավել օգտագործվող0,03 հա հողամասի) վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների (բնակելի տուն 144,0քմ՝ կառուցված 1962թ., բնակելի տուն 181,8քմ ՝ կառուցված 1970թ, ծածկ 5,6քմ՝ կառուցված 1970թ, պահեստ 2,3 քմ՝ կառուցված 1970թ., ծածկ 31,0 քմ՝ կառուցված 1970թ., թռչնանոց 6,5 քմ՝ կառուցված 1970թ) նկատմամբ:

Բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունները բավարարում են <<Համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների պահանջները:

Հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում : Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերի , չեն առաջացնում սերվիտուտ:

2.Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից :

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան մարզային ստորաբաժանմանը՝ գրանցելու Վաղինակ Շավարշի Ներսիսյանի ( ծնվ.30.06.1938թ) և Էմմա Քերոփի Գրիգորյանի (ծնված 02.09.1940թ) սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և այդ հողամասումառկա բնակելի տան և բնակելի տան և բնակելի

նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական :

4. 0093-0013 ծածկագրին տալ Աբովյան փողոց , թիվ 16 հասցեն:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

2016 թ. նոյեմբերի 15
գ.Գայ